ԹՎ. ՁՂԱ. Շնորհիւ եւ ողորմութեամբ բարերար եւ մարդասիրին Աստուծոյ ես աթոռակ վարհամ որդի իւանէի որդուն մեծին եւ հզաւրին զաքարիայի վերստին նորոգեցի զկումբէթն որ փրկչիս վասն երկար կենդանութեան իմոյ եւ յիշատակ մեզ եւ նախնեց մերոց ⊙ արդ ես վասիլս որդի գրիգորս առաքեցա պատրոնին հրամանաւն աթաբակ վարհամա եւ եկել կատարեցի մեծ ջանիւ եւ աշխատութեամբ զհրամանելս ինձ եւ սպասաւորք որ փրկչիս ընձա մատուցին մեզ զվարդավառին կիրակէն ի պատարագ.

ՀԱՆԴԷՍ

Հարցաքննութեան և Պարգևաբաշխութեան աշակերտաց Ռափ. Վարժարանի։

Կրօնք, ուսումն և արուեստ, տկար մարդկութեան երեք նեցուկները, մանաւանդ թէ ըսել մանկական սրտից առաջին և յարատև բաբախմունքներն են ամենայն յառաջադէմ ազգաց մէջ։ Մինչ կրօնք ծնողաց միջնորդութեամբ պահ առ պահ մատաղ միտքերն 'ի խորս ճշմարտութեան կը ջանան մխել, ո՞վ կրնայ ժխտել թէ անոր ձայնին միշտ անվրէպ ունկնդիր ըլլալու համար պէտք է մնաց ըմբռնողութիւնն ու սրտից զգացմունքն ալ պատրաստել ժիր և ինքնանուէր դաստիարակաց ձեռքով, փոխանակ Աբարչին սիրոյ՝ միսիթարութեան անփակ գիրկ մը բաց ցուցընելով ակներև անոնց հոգւոյն աչացը, և գոգցես աստուածեղէն լոյս մը սփռելով իրենց նորուսումն մտացը վրայ, զանազան գեղեցկութեամբ գիտութեանց զմայլեցնելով առ սուրբ և գերագոյն վախճան, և գործունեայ եռանդեամբ ըստ չափու կարողութեան՝ մարդկային արուեստի հրաշալիքներ հնարելու կամ կերտելու պատճառ ըլլալ իրենց։ Այս երեք կէտերն պատշաճապէս և անմոլար կերպով իրարու հետ կապակցելուն, և միմեանց օգնական ու դիւրացուցիչ ընելուն վրայ է միանգամայն կատարեալ դաստիարակութեան հրահանգը։ Աքանչելի պայման մը որ ունի կրթութիւնը. մարդկութեան անհաւասար տարերքը՝ զհոգի և ըզմարմին մէկմէկու մէջ հաշտ պահել և առ գերբնական օրէնս հնազանդեցնել. միով բանիւ կենաց անկանոն երգը բարեյարմար զուգել ըստ այլ և այլ աստիճանաց կրից, միշտ կանոն ուղղութեան՝ զԱստուած, և առաքինութեան՝ բարուց բարոյականը բռնելով, յորում է ճշմարիտ ճարտարութիւն մարդկութեան. և այն լծորդութիւնն ու միաբանութիւնն որ ունին ընդհանուր մասունք տիեզերաց իրենց շղթայակապ կարգաւորութեանը մէջ ըստ կարելոյն ծանօթացնելու ժամանակ, համագոյից կամ հոդագնտոյս մանրանկար՝ մեր մարդկութեան պզտիկ աշխարհքին հրաշալի շաղկապմանն և ստոյգ նպատակին հասու ընել զիրենք։

Այս խորհրդածութիւններս սովորականէն աւելի ազդեց մեր վրայ այս տարուոյս Ռափ. Վարժարանին պարգևաբաշխութեան հանդիսաւոր օրը։ Գորովանոք լեցուեցանք մենք ալ աշակերտաց անկեղծ սրտին ու կրթութեանը թարգման այլ և այլ ընթերցուածքներ լսած ժամանակնիս. խումբ մը եռանդուն պատանեաց տեսնելով առջևնիս, որոնք զմայլմամբ իրենց վիճակին բաղդը ճանչցած ըլլալնին երեսի և շրթանց շնորհապարա երախտագիտութեամբն արտայայտելէն վեր-

ջը՝ կարծես թէ յափանց ծովու երգաձայն նուագներով՝ իրենց նորանոր ընկերացն յաջողութիւն ու երջանկութիւն կը մաղթէին. այն նուագները կ'ըսենք որ Վենետկոյ վսեմաբերձ պալատանց լռութիւնը կենդանացնելով՝ գոդցես Վաղարշապատու և Արտաշատայ հաստահիմն զօրութեան և գիտութեանց արձագանգները կը զարթուցանէին մեր հայրենասէր սրտից մէջ։

Այս ընդհանուր խորհրդածութեանց հետ կարևոր հետևանք մ'ալ ծագեցաւ մեզերնիս մտածելով որ եթէ Պիւթագոր մը, Արիստոտէլ մը և այլ շատեր հեթանոս աշխարհքին մէջ՝ առանց լուսոյ հաւատոց, խորագնին խնդրոց սահմանն գտնելու վախճանաւ ըրած մարդկօրէն հանճարեղ վարդապետութեամբն և առ այն ուղղեալ ջանիւրը յառանձին հրահանգս և 'ի վարժեարս՝ անմահական անուն թողուցին, ուրեմն ոչինչ նուազ գովեստից և համբաւոյ արժանի են այն անձինքն ալ որ մարդկայինն կրթութեան էական կանոնին կրկին անգամ յաստուածուստ իմաստութեամբ պարզուելէն վերջը, այն վսեմ պաշտօնն յանձն առած են աւանդապահ և ուղղեցոյց ըլլալու այլոց 'ի նոյն անխաբ լուսաւորութիւն. և մարդկութեան ամենապէտ առաջին հասակներուն թանձրութեան կեղևանքը թօթափելով՝ կարևորօք կը զարդարեն զհոգւոյն բնութիւնը առ մէկ ճշմարիտ կեդրոն ձկտելով զիրենք, և սրտիւ ու մտօք կրթեալ ընտիր քաղաքացիներ կ'ընծայեն մարդկութեան և հայրենեաց։

Վարձատրեցան աշակերտք ըստ իւրեանց արժանեաց գրեթէ ամբողջ մեր միաբանութեան, բազմաթիւ ազգայնոց՝ յորոց ոմանք ծնողքն իսկ էին տղայոց, և նշանաւոր քաղաքացեաց ժողովոյ մ'առջև, իրենց տարեկան ջանիցն ու քաջութեանն համեմատ մրցանակներ ընդունելով։

Երաժշտական նուագաց քաղցրալուր արձագանգներն, որոնց հետ ճշդիւ և ճարտարութեամբ կ'ընկերէր նաև աշակերտաց երգեցիկ պարն, հոյակապ սրահին բարձր կամարները կը հնչեցընէին, հաւաստելով միանգամայն որ Հայ ազգը յարմարութիւն ունի նաև եւրոպական եղանակաց, յորս կրնայ յաջողիլ՝ եթէ ինչպէս պէտք է ըստ կանոնաց արուեստին կրթուի։ Հանդիսին շքեղութիւնն և բազմաթիւ հանդիսականաց ցուցրցած զգացմունքն և ուրախութիւնը, կերպով մը կ'աւելցընէր՝ ոչ միայն վարձատրելոց զգացմունքն և ուրախութիւնը, այլ նաև քաղցր խրախոյս մը կ'ազդէր անոնց մատաղ սրտին, իրենց առաջիկայ ասպարէզին մէջ դեռ աւելի ջանիւ և անդուլ յառաջանալու. որպէս զի օր մը, որ ոմանց համար շատ հեռու չէ, իրենք ալ կատարելապէս ընթացքնին լմնցուցած, երթան միանան այն ընկերակցաց խմբին հետ, որոնցմէ քիչ մը առաջ բաժնուեցան յուղարկելով զիրենք 'ի կարօտալից գիրկս ընտանեաց, մանաւանդ թէ 'ի գիրկս հայրենեաց, որ ինքն ալ կարօտով կը սպասէ առաքինի, գիտուն և ազգասէր որդւոց։ Այս խմբէն անոնք որ արուեստի կամ գիտութեան մը մէջ աւելի յարմարութիւն կը ցուցընէին, ոմանք 'ի Բարիզ յուղարկուեցան, և ոմն ալ քիչ մը ժամանակ հոս՝ Վենետիկ մնաց, որ իրենց արուեստն աւելի կատարելագործեն, որով թէ իրենք և թէ Վարժարանը իրենց առաջեղեալ նպատակին հասնին, առ որ ուղղեալ են Յարգոյ Տեսչին և իրեն գործակցաց ջանքն և աշխատութիւնը։

Աւարտավարժ աշակերտաց անուանքն են.

Պ. Յարութիւն Երամեան.
Պ. Պետրոս Սարգիսեան.
Պ. Պետրոս Շաչեան.
Պ. Յովհաննէս Շիշեան.
Պ. Յովսէփ Իսկենտէրեան.
Պ. Վիչէն Արագեան.
Պ. Խաչատուր Պապայեան.
Պ. Գրիգոր Վիճինեան.
Պ. Յարութիւն Այլահվերտեան.
Պ. Գէորգ Աղնաւորեան.
Պ. Յովհաննէս Ապտուլլահեան.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ